

Չարց

Ինչպե՞ս է սահմանվում և կիրառվում կարգավորվող սակագները:

Պատասխան

Սակագների սահմանման ու վերանայման կարգը, այդ առնչությամբ լիցենզավորված անձանց կողմից ներկայացվող անհրաժեշտ փաստաթղթերի ձևերը և ցանկը (հայտի փաթեթը) սահմանում է հանձնաժողովը:

Սահմանված սակագներն ուժի մեջ են մտնում որոշումն ընդունվելուց 30 օր հետո: Սակագների գործողության ժամկետը 1 տարուց պակաս լինել չի կարող, բացառությամբ այն դեպքերի, երբ`

1. Լիցենզավորված անձը խախտում է գործունեության լիցենզիայի պայմանները.

2. Սահմանված սակագների մեծությունների դատական կարգով բողոքարկման արդյունքում դատարանի վճռի հիման վրա հանձնաժողովն ընդունում է նոր որոշում:

Հանձնաժողովը սահմանված կարգով կարող է սահմանել լիցենզավորված անձի գործունեության երկարաժամկետ սակագին:

Սահմանված սակագինը կարող է արտահայտել ինչպես որոշակի թվային արժեք, այնպես էլ որոշակի մեծություններից կախված հաշվարկային բանաձև:

Սահմանված սակագինը կարող է վերանայվել ինչպես լիցենզավորված անձի, այնպես էլ հանձնաժողովի նախաձեռնությամբ: Հանձնաժողովը սահմանված կարգով սակագինը վերանայում (վերահաստատում կամ փոփոխում) և որոշում է կայացնում լիցենզավորված անձի վերանայման հայտի փաթեթն ընդունելուց հետո` 90-օրյա ժամկետում:

Հանձնաժողովը սեփական նախաձեռնությամբ կարող է վերանայել գործող սակագինը և սահմանված կարգով սահմանել նոր սակագին` ելնելով լիցենզավորված անձի տնտեսական գործունեության արդյունքներից, ներդրումային ծրագրերի և սպառողներին նատուցվող ծառայությունների որակի նկատմամբ ներկայացված պահանջների կատարումից:

Հանձնաժողովը հաստատում է սակագների համար անհրաժեշտ ցուցանիշների (շահութաբերության, մաշվածության, սեփական կարիքների, կորուստների և այլն) սահմանային (թույլատրելի) մեծություններ տոկոսային կամ բացարձակ մեծությամբ կամ հաստատում է դրանց հաշվարկման մեթոդիկաները: